

աւելի՛ ընթացակից ըլլալով մայրաքաղաքին միջին արհեստաւորներուն և տոկուն բանուորներուն զործերուն՝ տեւած են աւելի՛ տոկուն ամբուլթեամբ, աւելի՛ միջին հաշուեզիտութեամբ մը: Առնցմէ ոմանց ամիրայուլթիւնն ալ՝ իբրեւ մտան ծառայողներու արքունակաշինն՝ ունեցած է միւս կողմէն աւելի՛ ազնուական աւելի՛ բարեսէր ու այլախնդիր շուք մը, որով և իրենց ազդեցութիւնն հանրային զործերու մէջ վայելած է աւելի՛ ժողովրդականութիւն և աւելի՛ սէր: Ասոր համար է որ Պալեան Գրիգոր ու Տատեան ամիրաները՝ վայելած են չինգ ամիրայի բարոյական ոյժ, և ինք՝ Պապա Գրիգոր ամիրան՝ Ղազէզի ձեռքէն բռնողը, զատուած ու ճանչցուած է Վարպետ (sage) ամիրայ յորջորջումով, ինչպէս կը կոչուէր նոյն ինք Մետաքս ամիրան ալ:

Այս վերջիններուն համարը խրախուսանքովն և զործակցութեամբ, մանաւանդ հի՛ տեղացիութեան և հնարազէտ մտացիութեան իրաւունքներով, Պոլիսի գլխաւոր էանաֆներն ու արհեստազէտներն ալ՝ դարիս սկիզբէն՝ կանոնաւորապէս միջամուխ եղած են հասարակային իրողութեանց, իրենց արհեստապետներուն և Չարպանէցի ճոռոմ հայերուն միջոցով, որ ունեցած են մերթ (1815-1840) ամիրաներու հաւասար ոյժ մը՝ մանաւանդ իբր ամէնէն իրահմուտներն ու ելմտազէտները Պոլիսի մէջ: Առնցմէ ելած են նաեւ ուսումնական ուսումնասէր ու խորհրդական մարդիկ՝ սկսելով թերգեանց Աբրահամ Չէլէպիէն, Բեստենէն, Եղեպեանէն՝ մինչև Գրիգոր Աղաթոն, Սերվիլէն, Յակոբ Կրճիկեան, Յովհաննէս Միւհէնտիսեան, Պետրոս Խորասանճեան, Յակոբ Տիվիթեան, Բարունակ և Ստեփան Արսլանեան (ետքը փաշայ) պէյ էֆէնախները, որ նաև կըրցած են քանիցս միջնորդել խաղաղապէս ամիրաներուն և արհեստաւորներուն՝ խօսքով, խրատով, խորհուրդով ու գրիչով, մինչև որ շոգենաւային, հեռագրական ու տպագրական դիւրութիւններն եկան աւելի զիւրացունել բարձրամիտներուն անհաւանութիւնն և անհամոզելի անզիտութիւններն, ու բառնալ հաւասարել իրենց ու հասարակութեան միջև կոթողած ամբարտակեալ խտիրը: Այդ խորհրդական մարդիկ՝ կըրնանք ըսել՝ առանց հաւանելու իրենցմէ ոմանց ծայրայեղ